ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզի
Պրիվոլնոյեի համայնք,հացե,հեռախոս,էլ.փոստ

# ՈՐՈՇՈՒՄ

<<21>> 02 2013թ. թվականի N 07-Ն

Համայնքի զարգացման 2013-2016 թթ քառամյա ծրագրի հաստատելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով, Պրիվոլնոյեի համայնքի ավագանին որոշում է՝ հաստատել Պրիվոլնոյեի համայնքի զարգացման 2013-2016 թթ քառամյա ծրագիրը համաձայն հավելվածի:

| Ավագանի | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Մուրադխանյան Ալբերտ | | | |
| 2. Քարապետյան Արմենակ | | | |
| 3. Քարապետյան Հայրապ. | | | |
| 4. Մամուլյան Անդրանիկ | | | |
| 5. Ռևազյան Էդուար. | | | |

Համայնքի ղեկավար Վ. Սարդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016թթ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
2013-2016թթ.

Կազմեց համայնքի ղեկավար Վազգեն Սարուխանյան

Քննարկվել և հաստատվել է Պրիվոլնոյեի համայնքի ավագանու 2013թ-ի փետրվարի 21-ի նիստի թիվ 07-Ն որոշմամբ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում

2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

3. Առանձին բնագավառներում առաջնահերթ խնդիրների, ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները`

**Հավելված** 1. *Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը*

**Հավելված** 2. *Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը*

# ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը` գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Պրիվոլնոյեի համայնքի քառամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

1. 1Խմելու ջրի արտաքին ցանցի վերակարուցում
2. Միջհամայնքաին ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում
3. Մշակույթի տան հիմնանորոգում և կահավորում
4. Մանկապարտեզի վերանորոգում

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է

# ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. 1Խմելու ջրի արտաքին ցանցի վերակարուցում
2. Միջհամայնքաին ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում
3. Մշակույթի տան հիմնանորոգում և կահավորում
4. Մանկապարտեզի վերանորոգում

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա 2013-2016թթ. ծարագրում ներառված են համայնքի հիմնական խնդիրները:

Համայնքային զարգացման քառամյա ծրագիրը հրապարակվում է համայնքի զարգացման ընդհանուր խնդիրների մասին պատկե-րացում կազմելու, առաջիկա 4 տարում ռեալ ծրագրեր և բյուջե կազմելու, տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները կոորդինացնելու համար:

Ծրագրում ներկայացված են հետևյալ փաստաթղթերը.

1.Խմելու ջրի արտաքին ցանցի վերակարուցում

2.Միջհամայնքաին ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում

3. Մշակույթի տան հիմնանորոգում և կահավորում

4. Մանկապարտեզի վերանոռոգում

# 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պրիվոլնոյեի գյուղը հիմնադրվել է 1850թ. Հիմնական բնակչությունը եղել են ռուսներ, որոնք տեղափոխվել էին ցարական Ռուսաստանի տարբեր մարզերից:Տարածքը որտեղ հիմնվել է գյորղը եղելե անտառ որտեղ աճում էին հաստագուն կաղնիներ: Կտրտելով այդ ծառերը մարդիկ կարուցել են իրենց համար բնակարաններ Պրիվոլնոյե գյուղի եկեղեցին կառուցվել է 1875թ, որը կոչվում է СВЯТОГО МИХАИЛА АРХАНГЕЛА:

Սահմանակից է Վրաստանի Հանրապետության հետ,գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1580 մ բարձրության վրա: Գյուղից վրն Լարվար սարն է,խմելու ջուրը բխում է սառնորակ աղբյուրներից:Խմելու ջրով գյուղն ապահովված է 65-75%:Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը զովը:Հաճախակի են չորային երաշտի տարիները,որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվողը գյուղացին:

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը | 1110 |
| . տղամարդ | 538 |
| . կին | 572 |
| . նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան) | 67 |
| . դպրոցական տարիքի ( 7-17 տարեկան) | 167 |

| | |
|---|---|
| . միջին տարիքի (18-60 տարեկան) | 700 |
| . 60 տարեկանից բարձր | 176 |
| . ընտանիքների թիվը | 375 |
| . գրանցված ընտրողների թիվը | 674 |

***Բնակչության սոցիալական կազմը***

| | | |
|---|---|---|
| 1. Կենսաթոշակառուներ, որոնցից՝ | | 175 |
| | հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի) | 10 |
| | միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 7 |
| | երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | - |
| | մանկուց հաշմանդամ երեխաներ | - |
| | միայնակ կենսաթոշակառուներ | 4 |
| | զոհված ազատամարտիկների ընտանիքներ | 4 |
| 2. | Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից ՝ | - |
| | ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ *(1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)* | 21 |
| 3. | Փախստականներ *(մարդ)* | 32 |
| 4. | Բռնադատվածներ | - |
| 5. | Բազմազավակ ընտանիքներ *(3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)* | 13 |
| 6. | Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը *(միջինը)*, այդ թվում՝ | - |
| | ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը | 48 |
| | միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը *(միջինը)* | 3 |

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է432 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 32 մարդ: Հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ:

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2012թ. սեպտեմբերի 09-ին III անգամ համայնքի ղեկավար է վերընտրվել Վազգեն Երվանդի Սարուխանյան: Բնակչության սոցիալ տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Պրիվոլնոյեի համայնքի ղեկավարը,

համայնքի նորընտիր ավագանին իր 5 անդամներով նպատակասլաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթելու պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:

Գյուղապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

| | |
|---|---|
| *գյուղապետի տեղակալ* | *1 միավոր* |
| *առաջատար մասնագետ* | *1 միավոր* |
| *հավաքարար* | *1 միավոր* |
| *աղբահանության գծով տեխ աշխատող* | *1 միավոր* |
| *վարորդ-մեխանիզատոր* | *1 միավոր* |
| *պայմանագրային աշխատող* | *1 միավոր* |

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը` 7 մարդ:

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ

Կրթական համակարգը ներառում է 1 միջնակարգ դպրոց: Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոցում: Դպրոցը կառուցվել է 1953թ-ին, 2008թ-ին կապիտալ վերանորոգվել է: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, 1 ուսուցչին ընկնում է մոտ 9 աշակերտ, աշակերտների թիվը կազմում է 133, իսկ աշխատողներինը` 30, որից ուսուցիչ` 18: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով, սակայն համակարգիչների անբավարար քանակի պատճառով ինֆորմատիկայի դասերը ընթանում են ոչ լիարժեք: Դպրոցը գազաֆիկացված է, չունի մշտական խմելու ջուր, ունի լոկալ կոյուղի:

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը սպորտդահլիճի անմխիթար վիճակն է, չունի հանդերձարան, ջեռուցում, պատուհանները փոխելու ենթակա են:Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերիցը:Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակումը,որը միշտ զբաղցնում են դպրոցականները:

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Համայնքում գործում է մեկ բուժկետ,որը գտնվում է բավարար վիճակում:
Չկա համապատասխան գույք և սարքավորում:Բուժ կետն ունի մեկ աշխատող:

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի վարչական տարացքը --5608հա,որից
- Վարելահողեր --1148 հա
- Խոտհարք --1561հա
- Արոտավայրերը -- 1799հա
- Անօգտագործելի հողեր -- 319հա
- Ջրեր --45հա
- Դաշտային ճանապարհներ -- 18 հա
- Գերեզմանոց -- 4 հա
- Տնամերձ հողեր -- 92 հա
- Դպրոց -- 1 հա
- Հուշարձան -- 0,5 հա
- Գյուղամեջյան փողոցներ -- 5հա
- Սեփականաշնորհված հողեր --1580 հա
- Մեկ հողաբաժնի չափը -- 3,1 հա
- Այգի -- 11 հա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.Գյուղատնտեսության տնտեսության թիվը --420,այդ թվում
ա) անհատական տնտեսություն -- 420
2.Գյուղ արտադրանքի հիմնական տեսակ
ա) ցորեն -700
բ) գարի - 30
գ) հաճար – 45
դ) կորտոֆիլ -4500
ե) բանջարաբոստանային կուլտուրա -150
զ)կաթ –15200
է) միս --650
3.Ցանքատարածությունները --65
ա)հացահատիկ --30
բ)կարտոֆիլ --35
4Անասնագլխաքանակ
ա)խոշոր եղջերավոր անասուն -1633
այդ թվում կովեր - 796
բ )մանր եղջերավոր անասուն -302
այդ թվում մայրեր--244
գ)խոզեր- 105
այդ թվում մայրեր - 5
դ)թռչուններ - 760

այդ թվում հավեր -680
ե) մեղվաընտանիքներ -124

## ԳՅՈՒՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՏ

ա) մասնվոր սեփականություն
թրթուրավոր տրակտոր - 3
անիվավոր տրակտոր - 30
խոտհնձիչ կոմբայն - 1
բեռնատար ավտոմեքենա -10
տրակտորի կցասայլ - 16
գութաններ - 5
կուլտիվատորներ - 3
շարքացաններ - 3
տրակտորային խոտհնձիչներ – 6
խոտ հակավորող մեքենա - 8

բ) համայնքի սեփականություն
անիվավոր տրակտոր -1
խոտհնձիչ կոմբայն - 1
հացահատիկային կոմբայն – 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ, ինչպես նաև դրանից հետո ձեռք բերված գույքով՝ հետևյալ արտահայտությամբ.

- գյուղապետարանի շենք 1 միավոր՝
- մանկապարտեզի շենք. 1 միավոր՝ վերանորոգման ենթակա
- գերեզմանատուն 1 միավոր
- մշակույթի շենք – 1 միավոր՝ վերանորոգման ենթակա
  - հուշարձան – 1 միավոր
  - գազի ցանց – 1 միավոր

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- բնակչության անապահովության, հողերի օգտագործման անարդյունավետության, ինչպես նաև համայնքից երկարատև բացակայության պատճառով չեն կատարվում հարկային պարտականությունները՝ հիմնականում հողային
- արտագնա աշխատանքը և բնակչության արտահոսքը

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* համայնքը մեծմասամբ գազաֆիկացված է
* գործող առևտրական օբյեկտները հիմնականում բավարարում են բնակչության պարենային պահանջները
* համայնքում գծում է (Երևանի քաղաքային կաթի գործարան) Պրիվոլնոյեի կաթի ունդունման կետ, ոտեղ համայնքից ունդնում են կաթ և տեղափոխում կաթի գործարան
* բարեխառն եղանակը և առկա արոտավայրերը հիմք են անասնաբուծության զարգացման

# ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը, ավագանին հաշվի առնելով բնակչության պահանջները, սահմանում են զարգացման հետևյալ ռազմավա-րությունը՝ համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել ազգաբնակ-չության սոցիալ-տնտեսական պայմանները, օժանդակել գյուղատն-տեսական արտադրության ավելացմանը: Առաջիկա 4 տարում համայնքի հիմնական նպատակային խնդիրներն են.

# ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

## ԾՐԱԳԻՐ 1

## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՐՈՒՑՈՒՄ

Համայնքի ջրամատակարարման համակարգը արտաքին ցանցի երկարությունը կազմում է 5կմ:

**Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը**

Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինամսական սողության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 50 տարվա վաղեմության ունեցող մաշված ջրագծերը: Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծերի հիմնական վերակառուցումը: Սյուն ծրագրով առաջարկվում է հիմնական վերակարուցման ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ,որի համաձայն,ծրագրով պահանջվող գումարի 80% -ը կհատկացվիհիմնադրամի կողմից,իսկ 20% -ը համայնքի բյուջեից և համայնքի ներդրումներից:

ԾՐԱԳՐԻ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Իրականացնելով այս ծրագիրը,համայնքը 100% -ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով:
ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
Նախնական մոտավոր հաշվարկներով 5կմ երկարությամբ ջրագծերի վերակառուցման և վերականգնման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 30 մլն.դրամ:

## ԾՐԱԳԻՐ 2

# ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 10 կմ սույն ծրագրով առաջարկում է բարեկարգել ներհամայնքային փողոցները և ճանապարհները:
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևուկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:
Վերացնել փողոցների և ճանապարհների ջրափոսերը:
ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Համագործակցելով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ կազմել ծրագրի իրականացման նախագծի նախահաշվարկային փաստաթղթերը:
Կատարել ավազի, խաճաքարի և կավի խառնորդի փռում համայնքի փողոցներում և ճանապարհներում ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ:
Աշխատանքները կազմակերպել 2013-2014թթ. Ընդացկում:
Նախնական մոտավոր հաշվարկներով 10 կմ երկարությամբ փողոցների և ճանապարհների ասֆատապատման արժեքը կազմում է 300մլն.դրամ:

## ԾՐԱԳԻՐ 3

# ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Համայնքի բնակիչները չունեն իրենց ազատ ժամանակը հետքրքիր անցկացնելու հնարավորություն,որևհետև ակումբի շենքը գտնվում է շատ վատ վիճակում ,չունի անհրաժեշտ կահավորանք և գույք: Սույն ծրագրով առաջարկվում է մշակույթի տան հիմնանորոգում և կահավորումը:
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Ծրագրի հիմնական նպատակն է

Համայնքում մշակույթի տան հիմնման նպատակն է ստեղծել ազատ ժամանցի համար անհրաժեշտ պայմաններ հնարավորություն կստեղծվի ունենալ հետաքրքիր միջոցառումներ անցկացնելու վայր:
Համագործակցելով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը:
Աշխատանքները կազմակերպել 2013-2014թթ:
Նախնական մոտավոր հաշվարկներով մշակույթի տան հիմնանորոգման և կահավորման համար աշխատանքների արժեքը կազմում է 80մլն.դրամ:

# ԾՐԱԳԻՐ 4
# ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Համայնքը ունի մանկապարտեզի շենք,ենթակա է վերանորոգման
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Ծրագրի հիմնական նպատակն է համայնքի նախադպրոցական երեխաների համար ստեղծել անհրաժեշտ պայմաներ:
Ծրագրի խնդիրները

Համագործակցելով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը:
Աշխատանքները կազմակերպել 2013-2014թթ:
Նախնական մոտավոր հաշվարկներով մանկապարտեզի շենքի վերանորոգման համար աշխատանքների արժեքը կազմում է 60մլն.դրամ:

# ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Հ/Հ | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2011 փաստ | 2012 փաստ | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի տարաշք | հա | 5608 | 5608 | 5608 | 5608 | 5608 |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 1138 | 1114 | 1110 | 1112 | 1115 |
| 3 | Ծնունդը | մարդ | 10 | 11 | 13 | 14 | 16 |
| 4 | Մահացություն | մարդ | 9 | 7 | 8 | 9 | 10 |
| 5 | Աշխատանքային ռեսուրսները | մարդ | 660 | 432 | 445 | 448 | 450 |
| ա) | Զբաղվածները ըստ տնտ.ճուղեւի | մարդ | 660 | 432 | 445 | 448 | 450 |
| 6 | Գուծազուրկների մակարդակը | % | | | | | |
| 7 | Արևտրի օբեկտների թիվը | հատ | 10 | 6 | 4 | 4 | 4 |
| 8 | Պահուստային հողեր | հա | 434 | 434 | 434 | 434 | 434 |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակը | % հա | 60 | 60 | 60 | 65 | 65 |
| 10 | Խմելու ջրի ներքին ցանցի երկարությունը | կմ | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 11 | Ներհամայնքային փողոցներ և ճանապարհ. | կմ | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 12 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | Լիտ.օր | 200 | 200 | 200 | 200 | 200 |
| 13 | Ջրի կորուստների ցանցում | % | 15 | 15 | 12 | 10 | 8 |
| 14 | Սովորողների թիվը դպրոցում | մարդ | 151 | 139 | 133 | 140 | 145 |
| 15 | Գյուղապետարանի ենթակարուծվացքը աշխատողների թիվը | մարդ | 6 | 6 | 7 | 7 | 7 |

# ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Պրիվոլնոյեի համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

(հազար դրամ)

| հ/հ | Եկամուտի տեսակը | 2011 Նախա-տեսված | 2012 Նախա-տեսված | 2013 Կանխա-տեսում | 2014 Կանխա-տեսում | 2015 Կանխա-տեսում |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Եկամուտներ ընդանուր | 19630,0 | 15563,8 | 24810,2 | 25000,2 | 25100,2 |
| 2 | Հողի հարկ | 12920,0 | 7109,2 | 13300,2 | 13500,3 | 13500,3 |
| 3 | Գույքահարկ | 480,0 | 1029,2 | 1046,7 | 1047,7 | 1047,7 |
| 4 | Տեղական տուրքեր | 200,0 | 150,0 | 158,0 | 159,0 | 159,0 |
| 5 | Պետ.պահուստ.հողերի վարձավճար | 1450,0 | 5920,0 | 5930,3 | 5990,2 | 5992,3 |
| 6 | Պաշտոն.տրանֆ.դոտացիա | 4170,0 | 3179,6 | 3752,7 | 37963,6 | 37981,2 |

ՀԱՎԵԼՎԱԾ 1

# ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

| | |
|---|---|
| 1. Գյուղապետարանի շենք | - 1 միավոր |
| 2.Մշակույթի տուն | - 1 միավոր |
| 3.Խմելու ջրի ներտնտեսային համակարգ | - 12 կմ |
| 4.Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ | - 7կմ |
| 5.Հուշարձան | - 1 միավոր |
| 6.Գյուղ.տեխնիկա և գործիքններ | - 2 միավոր |
| 7.Գերեզմանատուն | - 1 միավոր |
| 8.Մանկապարտեզի շենք | - 1 միավոր |
| 9.Գազի ցանց | - 21կմ |